

ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ (ԱԾԱՆՑՄԱՆ) ԲԱՐԲԱՌԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(ԴԻԱԼԵԿՏԻԶՄՆԵՐ) ԱՐՑԱԽԻ ԵՎ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԳՐՈՂՆԵՐԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ*

Ունա Մովսեսյան

Լեզվի բառապաշտի հարստացման հիմնական ուղիներից մեկը բառակազմական օրենքներով նոր բառերի ստեղծումն է: Արցախի բարբառն իր բառապաշտի արմատական բառերի հիմքի վրա, ընդհանուր հայերենին հատուկ բառակազմական կադապարներով ստեղծել է և շարունակում է ստեղծել նոր՝ բաղադրյալ բառեր՝ բառաբարդման և ածանցման եղանակներով:

Արցախի և Զանգեզուրի գրողների ստեղծագործություններում գործածվել են մեծ թվով ածանցավոր բարբառային բառեր, որոնք աչքի են ընկույն կառուցվածքային բազմազանությամբ:

Ղարաբաղի բարբառում նախածանցների թիվը խիստ սահմանափակ է: Հայերենի նախածանցներից գործածական են միայն ամ-, չ-, տ- ժխտական ածանցները՝ անդար (անտեր), չըպերք (չբեր), տրհալ (չհալած), տըկոր (անթը):

Վերջածանցներն, ի տարրերություն նախածանցների, մեծ թիվ են կազմում: Համեմատաբար կենսունակ են՝ ազար/ազյար (ցավազար), ալի (մսալի), ալ (մըկուլ), ակ/ակ (վըկուլ), ա(կան)/(այ)կան (պըրտական), ան (կէսան), անէգ (լուզվանեգ), անուկ (շըրանուկ), անուց (հինգանուց), աշ/աշ (թթվաշ), ասկ (թըռըմասկ), ավուն (մըծավուն), ատ (կէսատ), արար (տընարար), ացու/ացու (մըսացու, թիլացու), է/ի (թուրէ, տանձի), էգ' (ածէգ'), ը՛ցէ (շինմացէ, քըղըք՛ցէ), էքան/ը՛քան (հրէքան), իք (ըսելիք), կօտ/կուտ (վըմլըկօտ), հան(ա) (հրըսըհանա), մունք (չըրչարմունք), պան (ճըղացպան), վաթ (խորիտավաթ), վանք (փառիվանք), վաչի (հըմմըզվաչի), վարի (հշըվարի), վէ (հըրըկըշվէ), տան (ըրըշկետան), տակ (մըտակ), ուկ/ ունկ (կաթուկ), ում/ունմ (կոլտում), ունք/ունք (հմէկունք), ուռ/օռ (հակոռ, քըշկոռ), ուստ/ունստ (ապրուստ), ուտ/ունտ/ օս (խընձօրուտ, մոշոտ, հուն նուն տ), ուրթ/որթ/ըրթ (ժուղովուրթ), օթուն/օթուն (հընգըրօթուն, փիսօթուն), ք/կ (թէվք, շօխկ), օսկ/ասկ (պըտըռօսկ), օց/օց/ոց (զըռօցօց, թըրըխօցօց) և այլն:

Ղարաբաղի բարբառն ունի նաև փոխառյալ ածանցներ, որոնք կարող են դրվել և բնիկ, և՝ փոխառյալ բառերի վրա: Անդրադառնալով ածանցների փոխառությանը՝ Ա. Սուլքիայանը գրում է. «Ածանցների փոխառությունը հազվադեպ երևույթ է: Հայերենում սակավ են այդ կարգի ածանցները: Նման ածանցները ստվորաբար նախ լեզվի մեջ են անցնում փոխառյալ բառերի կազմում: Ստվորաբար փոխառյալ բառերի մեջ նրանք նախապես ածանց չեն գիտակցվում, որովհետև բառը փոխ է առնվում իր կառուցվածքային անբողջությամբ: Հետագայում, եթե օտարազգի բառի ածանցը բառա-

* * Հոդվածն ընդունվել է 03.03.2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՍՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնը:

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԽՈՏՏՈՒ 2015

կազմական ունակություններ է ցուցաբերում փոխառու լեզվում, այսինքն՝ այդ ածանցով կազմվում են նորանոր բառեր, այդ դեպքում միայն տվյալ ածանցը տարբերվում և ընթանական է իրեն տվյալ լեզվի փոխառյալ գործուն ածանց»:^{*}

Արցախի բարբառում գործածվում են պարսկերենից փոխառված բեյ (պրակ. bi) ժխտական նախածանցը (բէյվախտ), թուրքերենից փոխառված հնջի/ընջի/հինջի (թր. iŋj)՝ վեցինջի, լար/լա՛ր (թր. lar)[†] դայիլար, լու/լո՛լ (թր. lu)[†] ջանլու, չի (զարավաթչի, թքուչի, նախրչի), սըս/սուզ (թր. sus)[†] թայսըզ և ռուսերենից փոխառված իստ (ист) կոմունիստ, ածանցները:

Արցախի և Զանգեզուրի գորղների ստեղծագործություններում ամենահաճախակի գործածվող բարբառային ածանցը -վարի ածանցն է: Այն ունի նման, պես, կերպով բառակազմական նշանակությունը, կերտում է մակրայներ: Ա. Ս. Սուրբիայանը ժամանակակից գրական հայերենի ածանցների շարքում ներկայացնում է նաև -վարի ածանցը՝ նշելով, սակայն, որ դրանով կազմված բաղադրությունների զգալի մասը գործածվում է գործառնական ցածր ոճում:[†]

Մեր օրինակներում -վարի ածանցի համար բառակազմական հիմք են ծառայել և բարբառային բառեր (լոպազավարի-սնապարտօրեն, գեղավարի-գյուղացու նման), և գրական հայերենի բառաշերտին պատկանող բառեր (թերավարի, մեծավարի, մտերմավարի, հարազատավարի, տղանարդավարի, տնավարի, գյուղավարի, թուրքավարի, գինվորավարի, կնավարի, մարդավարի և այլն), և հատուկ անուն (գրիգորավարի) և այլն:

Օրինակ՝ -Ո՞ց ես,-ասաց տնավարի, բարեկամաբար: (9, էջ 39), -Լավ, տղողոցդ մի գցիր, վերցրու, -մեծավարի տեղի էր տալիս Սարա քոյրիկը: (6, էջ 592), Նախ տուրծ հրամցրին՝ սղամարդավարի՝ թժնանք հեղեղով շուրջը: (8, էջ 107), Երկի կուզեր մի գրիգորավարի հեգնանք տալ կնոջը: (8, էջ 154), Իսկ սա կանգնել, կնավարի ուշունց է տալիս: (8, էջ 32), Ճաշելուց հետո գինվորավարի վեր կացան: (9, էջ 87), Հետո փայտ ջարդեց և հիմա «գյուղավարի» նստել, ծխում է: (1, էջ 169), Բարովդ քեզ պահիր, անկիրթ, ես քու թայը չեմ, որ գեղավարի «քարով» ես անում: (5, էջ 350), Հարբած-հարբած շան լակուտը կիպարտանա լոպազավարի՝ ես մի անգամ մարտգում Վարդերի թուշը պաշել եմ: (10, էջ 336), Վահրամը մեծավարի գոզնոցը կապել է ու պսոտակով ծխնին ամրացնում է պատուիհանի կողին: (7, էջ 275), Արտեմն իր հետ վարվում էր առավել համարձակ ու առավել... հարազատավարի, ավելի ճիշտ՝ ընդգծված եղբայրավարի: (6, էջ 78), Կյանքում մի գործ մարդավարի չի արել: (7, էջ 355), Հետո խուեց խիստ, բայց թերավարի: (9, էջ 28), Պարապ մարդը թուրքավարի է մտածում: (9, էջ 67):

Ինչպես տեսանք, -վարի ածանցը, ավելանալով գրական բառակազմական հիմքն, տալիս նրան բարբառային երանգ:

Բարբառային վերջածանցներից մեր օրինակներում որոշակի բառակազմական ակտիվություն են ցուցաբերում նաև -անք, -ունք, -ոնք ածանցները, որոնք հատուկ գոյական հիմքից հավաքական գոյականներ են կերտում՝ Պարսեղանք, Թյունունք, Դրիբանք, Հուրունք, Սանգունք և այլն: Օրինակ՝ Թող էր երեխոցը տերերը՝ Հուրունք, Թյունունք, Պարսեղանք, Սանգունք, Դրիբանք, ուրախանան: (1, էջ 492)

* Սուրբիայան Ա. Ս., ժամանակակից հայոց լեզու, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1989, էջ 295:

[†] Տես՝ նույն տեղում, էջ 316:

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

-Ունք ածանցը ծմակ (անտառ) բարբառային բառից կերտել է տեղանուն՝ Ծմակոնք հաստուկ գոյականը, որը գործածվել է Ս. Խանզադյանի կողմից. Ծմակոնքի սարալանջին, որ հենց գյուղի դիմացն է՝ ձորի մյուս կողմում, երբեմն երևում էր այնտեղ պուր անող նապաստակը: (5, էջ 91)

Խնդրո առարկա ստեղծագործություններում մեծ թվով բարբառային բառեր են կերտվել նաև հետևյալ ածանցներով.

• -ական. **քլոխվայական** (քլոխվա, պրսկ., թրք. **Կեհյա**-գյուղի կառավարիչ, տանուտեր), **գյողալական** (գյօզալ, աղբբ. ցօշալ-ած. գեղեցիկ), **դիրիժորական** (ռուս. դիրիժեր-երժշտ). Խմբավար) և այլն: Իսկ դու ինչո՞ւ ես **գյողալական** կնիկդ թողելի, ուրիշի հետևից ընկել: (10, էջ 43) Եղ քլոխվայական թեղերդ ինչո՞ւ ես պահում: (10, էջ 340) Մելիք Շահնազարը մեր գյողալական Դարաբաղդ ծախեց: (10, էջ 197) Ծուապեցի տուն՝ այդպես էլ չհասկամալով մեր տան բակում նրա ցուցաբերած «դիրիժորական» բարձր ոգևորությունը: (6, էջ 8)

• -ան. **ճճդան**, **ծլլան**, **զղղան**, **ճռոան**. այս բառերում ցոյց է տալիս համապատասխան ծայնական հատկանիշ ունեցող երանգներ: Շաղասարի **զղղան** հովերն իրենց անուշ սրինգներն են նվազում ականջին տակ: (10, էջ 338) Արևամուտ, ծլլան թախիծ...: (9, էջ 47) Ծառերի ծմակի **ճռոանը** մնո՞ւմ է: Հիշո՞ւմ ես՝ ոնց թրմիացի: (7, էջ 205) Մեկ էլ այն **ճճդանն** էր դեռ գլոխկախ չափչփում ծմակը՝ անիծելով, անիծելով արարչին: (8, էջ 173)

• -անոց (անօց). **մանեթամոց** (մեկ ռուբլու արժողություն ունեցող, փիսք. էժանագին). Գրպանը խառնշտուտում է՝ թաք **մանեթամոց** գտնվի: (7, էջ 255)

• -ային. **թռոային** (անձնային). Տարին **թռոային** է, ավերակի քարերի էլ է խոտ բրուել: (5, էջ 308...)

• -ուտ. **չանգչանգուտ**, **ցաքուտ**. **Չանգչանգուտ** մարդ ես, բայց դու էլ էր էղայիսի մարդ ես: (7, էջ 391) Բոլորի կենացը մեկ-մեկ խմեցին, սկսեցին **ցաքուտն** էր ջրել: (9, էջ 243)

• -ացու. **դեյրացու** (զգեստի համար նախատեսված կտոր) Ինձ նմա՞ն անձ մաքուր սրտով իիսուն ռուբլի եմ տալիս քեզ համար **դեյրացու** առնում, որ աղջկա՞ն տաս: (7, էջ 391)

• -ոկ (օկ). **ծրլլօկ** (1.ջրի բարակ շիթ, հոսանք, 2.շատ բարակ աղբյուր՝ առու). Մայրը՝ պառավ Օսաննան, Քարակնում, բոստանի խորքերում կորած՝ ակնի **ծրլլկ** ջրով դրիգն է ջրում: (8, էջ 102)

• -ովի (օվի). **թաղովի**, **սարրովի**. Ուստի մնում է մի բան՝ շինծու, **սարրովի** մեղադրանքներ չներկայացնեն: (6, էջ 425) Անդրամիկն ու Երանը օրոր-շորոր են անում, ու այսպես **թաղովի** մտել են պարի մեջ: (7, էջ 256)

• -ոց (օց). **պլլոց**. Գոնե ջուր լիներ. այս **պլլոցին** խմեինք: (7, էջ 179)

Փոխառյալ վերջածանցներից հաճախակի է գործածվել -չի ածանցը, որն ունի մի բան անողի, գործողի նշանակություն՝ գուռնաչի - գուրնա նվազող (գուրնա-պրսկ. zurma, թրք. zurma – փողային երաժշտական գործիք), բոստամչի - (թրք. bostancı) բանջարանոց խնամող, թալանչի – թալանող, կողոպտող (թալան-պրսկ. talan, թրք. talan-1.կողոպտու, 2.կողոպտված իր), դուքանչի – (թրք. dünkkâncı) 1.մասնավոր խանութ պահող մարդ, 2.խանութի վաճառող, ըրբաչի – (արաբաչի-թրք. aravaci) սայլը վարող անձ, սայլապան, կըլայեկչի – կլայեկագործ (աղբբ. galayci, կըլեկ-գրբ. կլայեկ, արաբ. galai – անագի բարակ շերտ, որով պատում են մետաղե առարկաները),

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Դամրչի – (թրք. demirci) դարբին, երկաթագործ, փիհնաչի – (պրսկ. pinai) 1.հին կոշիկներ կարկատող, 2.փիբ. վատ, անորակ աշխատող:

Օրինակ՝ Այդ եք, էլի, բռստանչիներ, կանաչի վարողներ: (10, էջ 330), Էգուց էլ փիհնաչիություն սովորեցնող խմբակ են կազմակերպելու: (1, էջ 174), Ուսում տալու փոխարեն բաղմանչիներ են պատրաստում: (1, էջ 174), Ասել են՝ մեզ անշնորհք գուրնաչի հարկավոր չետ, գնա գործիդ: (10, էջ 129), Ուրեմն արարաչիները հետ չ ըլի, հնգեր ժողովուրդ, նրանց ծայն-մայն չի հասնում, հա՞: (1, էջ 365), Բոլոր վանեցիները զենք էին առել՝ դուրանչի Միհյից մինչև Լեռ Կամսարը: (6, էջ 294), Արյունը սևացել, դարձել է Հայունց Փառանձեմի դազանը, որ երկու տարին մեկ հոնուտեցի լիալեկի Մարդին է հարում-մաքրում: (7, էջ 358), Իմ պապերի տնից քշեմ թայանչի բռնավորին, իմ աչքի արցունքը սրբնմ: (5, էջ 162), Թե գյուղի մի ծայրին դամբչի Ալեքսանը փոշտա, էն մի ծայրից հաշվապահ Մարուխանի մայրը դուրս կամ իր տան կտուրը: (5, էջ 28)

Ուսումնասիրված գրականության մեջ հանդիպել ենք ռուսերենց փոխարված - իսլ ածանցով կազմված՝ չեկիստ (Անրիին գործերի աշխատող, փիսբ. Վերակացու), անարիխստ ((ռուս. անարխիստ) - ընդհանուր կարգապահությանը չենթարկվող անձ), տամնկիստ ((ռուս. տահ-հրասայլ) – հրասայլ կառավարող) բարբառային բառերի գործածության. *Տեղն էլ որ ընկնի, պիտի ասես չեկիստ ես:* (9, էջ 79) Անարիխստ ժորային մորթեցին սրով: (6, էջ 555) –Տանկիստ, -անվարան պատրասխանում էր տղան: (5, էջ 95)

Ան- նախածանցով են կազմվել բարբառային ամհամանչ (անամոր), անպոռշ (անշրթունք), անշառ (անվտանգ), անսուստ (անծայր) բառերը. Քոր Սուրբանը շտապ հասավ նրան, բանալին խլեց ու մոլտաց. - Կորի՛ր, գնա, անհամանչ: (7, էջ 142) Անպոռշ Մխնոն և Ծիշ Սերգոն ձեռքերը մեջքին կապած Մխիթարյանին հրեցին Արաբեկ տեր հոր սենյակը: (1, էջ 308) Միկնույն է, մենք անմեղ ու անշառ, արդար մարդիկ ենք, ձեր ջանքերը գուր եմ: (6, էջ 109) Թե չէ՝ մեկ էլ տեսար՝ մոլորվեցիր անսուստ, անվերջ տափաստամում: (7, էջ 203)

Օգտագործվելով գրական համատեքստում՝ բարբառային բաղադրյալ բառերը հաճախ մասնակի գրականացվում են՝ կրելով կառուցվածքային որոշակի փոփոխություններ, ինչի արդյունքում են հետաքրքիր կառույցներ, որոնք դարձել են մեր ուսումնասիրության առանցքը:

Ուշագրավ են խնդրո առարկա գրականության մեջ գործածված այնպիսի ածանացավոր բառերը, որոնք կազմված են բարբառային բառակազմական հիմք + գրական ածանց կաղապարով: Այսինքն՝ գրական համատեքստում ածանացավոր բառը մասնակի գրականացվում է, ինչը տարածվում է ածանցի վրա: Այս առումով բավականին ակտիվ է -ություն ածանցը, որն ունի իր բարբառային տարբերակը - օթում: Այն, կցվելով թե՛ բուն բարբառային բառերին, թե՛ բարբառային փոխառություններին, կազմել է լոպազություն - սնապարծություն, խոլիզանություն - անվայել արարք (ռուս. խոլիզան, անգլ. hooligan-անվայել վարքագիծ ունեցող մարդ), դարիբություն - պանդսություն (դարիբ-արար., պրսկ., թրք. garib-պանդուխտ, օտարական), նամարդություն - ստորություն (նամարդ-պրսկ. namard-ած. տմարդի, ստոր մարդ), շոֆերություն - ավտովարորդի գործ (շօփեր-ռուս. աօֆեր-ավտովարորդ), ուստայություն - վարպետություն (ուստա-պրսկ., թրք. ista-վարպետ), սալդայթություն - զինվորի գործ (սալդաթ-ռուս. солдат, գերմ. soldat, իտ. soldane-զինվոր), լաշառություն - լկտիություն (լաշառ -թրք. locor-լկտի), ախմախություն -

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

հիմարություն (ախմախ-պրոկ. ահմակ-հիմար, տիսմար), չորանություն – հովվություն (չորան-պրոկ. չօբան, թք. չօբան-հովվի), փիլք. գրեթելություն և այլ բառեր:

Օրինակ՝ Զէ, չէ՞ մի, լոպագություն արեց, չե՞ս տեսնում հարբել ա: (5, էջ 117), Մարտիկին մանր խոլիզանության համար 15 օր նստեցրին: (7, էջ 368), Բերքը ածում էին մառանները և գնում դարձրության: (7, էջ 109), Դա ուղղակի «նամարդություն» էր՝ անպաշտպան մարդկանց դեմ եղնել: (6, էջ 622), Տղան զարմանում էր, որ դպրոցում «շոֆերություն» չեմ սովորեցնում: (1, էջ 40), Հողից ծառ հանելում էլ ուստայություն կա: (1, էջ 103), Սալդաթությունից ազատված մեր ախաղոր խաթրին խմելը դարպասից ենք սկսում: (1, էջ 256), Տարվա հինգ-վեց ամիսը խոպանում են, -պայթած լացի միջից լաշառությունը զցեց Հուրին: (8, էջ 196), Ով խմիչքի գիմն ու արժեքը իմանում է, նա էդ կարգի ախմախություն չի անի: (1, էջ 527), Քեզ ի՞նչ կա, շոֆերությանդ կաց: (8, էջ 195), Մտածեց, որ դա իր կողմից լոպագություն կիհն: (10, էջ 303), Ախաղորդ կնոջը, երեխաններին տեր կանգնիր, հերություն արա: (8, էջ 6), Հիսուն տարի փեշակս չորանություն անելն էր: (1, էջ 460), Մեխակը ներսում եփ եկավ, մեջքի սեռով մի կենություն անցավ, և կամքը սկսեց կաշկանդվել: (7, էջ 365), Բայց այստեղ էլ բռնեց նրա քրոյիությունը, ժողովում քննադատեց պետին: (10, էջ 344), Կոլխոզի ֆերմայի հորդերի շեֆությունը վերցնելու հարցն ենք դնում: (1, էջ 174), Դու կրիվ-գերությունում, դու՝ աքտորում, դու դարիբությունում, մենք չենք մերել, մենք ապրում ենք: (8, էջ 113):

Նոյն սկզբունքով հայերենի -քար, -ավոր, -եղեն, -ենի ածանցներով գրողները կազմել են փնտիորեն (փնտի-գոր. փնտի, հ.ե. phen-th - աննաքուր կերպով), լոթիաբար - կերուխում սիրող (լոթի-պրոկ. լուտ-սիրիկա, ստահակ, վրաց. loti-հարբեցող), պոզավոր - կոտոշավոր (գոր. պոզ-կոտոշ), փափախավոր – գլխարկ ունեցող (փափախ-թք. parak-1.գլխարկ, հատկապես մորթե, 2.փիլք. պատվազգացություն), էրկաթեղեն (երկաթեղեն), սաղսեղեն (ամանեղեն), մալասենի (մալաս-մեծահատ նռան տեակ) բառերը: Ընդ որում՝ -ավոր, -եղեն, -ենի ածանցները ունեն իրենց հնչունափոխված բարբառային տարբերակները՝ ավոր-ավէր, եղեն-ց՛ղան, ենի-ց՛նէ, իսկ -որեն, -քար ածանցներին բարբառում փոխարինում է -վարի ածանցը (փնտիվարի, լոթիվարի):

Օրինակներ՝ Համբերությունից դուրս եկա ու մեկին պատասխանեցի՝ պոզավոր: (1, էջ 17), Բայց միրգ ուտելը, մանավանդ ծեր Սարունց մայլասենի տանձը գիշերով ուտելը, խիստ տարածված է եղել: (7, էջ 329), Հանդի գործը փափախավորը կտնսնի: Էդ ո՞նց կիհնի, որ ես փափախավոր տեղովս, իմ բերած երկու հյուրն էլ, մի լայակավորի տակ: (1, էջ 12), Մեր տան փափախավորը ինքն է, թող ինքը խոսի: (1, էջ 365), Մարտին Միրզոյանն անզուսաց ոգևորության ու փնտիորեն քողարկված ուրախության զագարնակեստին էր, (6, էջ 283), Ես ինչ իմանամ՝ գիրք, նկարներ, էրկաթեղեն, սաղսեղեն է առնում, դպրոցի շկափները լցնում: (1, էջ 231), – Գնամ էն սիրում աղջիկներին ծաղիկ տամ, -Ալավանին լոթիաբար աչքով արեց: (9, էջ 295):

Այսպիսով՝ խնդրո առարկա Արցախի և Զանգեզուրի գրողների ստեղծագործություններում գործածվել են մեծ թվով բարբառային ածանցավոր բառեր, որոնք աչքի են ընկնում կառուցվածքային բազմազանությամբ և արտացոլում են ինչպես գրական հայերենի, այնպես էլ Ղարաբաղի բարբառի բառակազմական հարուստ ու ծկուն համակարգը:

Գեղարվեստական խոսքի վարպետները գրականի և բարբառայինի սահմանում ձևակիրում են մի կողմից գրական բառակազմական հիմք + բարբառային ածանց (եղբայրավարի), մյուս կողմից՝ բարբառային բառակազմական հիմք + գրական ածանց (լոպագություն) կաղապարներով կառուցներ:

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՄԱՐՄԻ ԽՈՏՏՈՒ 2015

Բարբառային ածանցավոր բառերի նման գրականացումը դառնում է բարբառի բառապաշտի հաշվին գրական լեզվի հարստացման ուղի:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Արքահանյան Ս., Սերունդների հետ, «Ամարաս» հրատ., Եր., 2008, 595 էջ:
2. Այվազյան Ս., Խիջձը, Հայպետհրատ, Եր., 1957, 267 էջ
3. Ավետիսյան Ն., Սրտի կայծեր, Ստեփ., 2013, 240 էջ:
4. Գաբրիելյան Գ., Ընտրանի, «Դիզակ պյուս» հրատ., Ստեփ., 2007, 255 էջ:
5. Խանզադյան Ս., Երկերի ժողովածու, հ. 6, «Սովետական գրող» հրատ., Եր., 1983, 606 էջ:
6. Հակոբյան Վ., Զատիկը ջրավազանի հատակին, «Դիզակ պյուս» հրատ., Ստեփ., 2010, 655 էջ:
7. Հովհաննիսյան Մ., Երկեր, հ. 1, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., Ստեփ., 2005, 468 էջ:
8. Ղահրիյան Ա., Պատրանք, «Սովետական գրող» հրատ., Եր., 1983, 248 էջ:
9. Մարտիրոսյան Հ., Համազարկ հրաժեշտից առաջ, ՀԳՄ հրատ., Եր., 2007, 94 էջ:
10. Օվյան Վ., Կապույտ տարիներ, «Դիզակ պյուս» հրատ., Ստեփ., 2007, 565 էջ:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Բառակազմական (ածանցման) բարբառայնությունները (դիալեկտիզմներ)

Արցախի և Զանգեզուրի գրողների ստեղծագործություններում

Ունա Մովսեսյան

Արցախի և Զանգեզուրի գրողների ստեղծագործություններում գործածվում են մեծ թվով բարբառային ածանցավոր բառեր, որոնք աչքի են ընկնում կառուցվածքային բազմազանությամբ և արտացոլում են ինչպես գրական լեզվի, այնպես էլ Ղարաբաղի բարբառի բառակազմական հարուստ ու ճկուն համակարգը:

Բանալի բառեր՝ բառապաշտ, բարբառայնություն, ածանց, ածանցում, բառակազմություն, նախածանց, վերջածանց, փոխառյալ ածանցներ, բառակազմական հիմք, բառակազմական կաղապար, բարբառային ծնութներ:

РЕЗЮМЕ

**Словообразовательные (аффиксальные) диалектизмы в произведениях арцахских
и занげзурских писателей**
Рена Мовсесян

В произведениях арцахских и зангеузских писателей использовалось большое количество диалектных аффиксальных слов, которые выделяются структурным многообразием и отражают богатую и гибкую словообразовательную структуру как литературного армянского языка, так и карабахского диалекта.

Интерес представляют, в частности, те аффиксальные слова, которые были образованы синтезом литературных и диалектных морфем.

Ключевые слова: *словарный запас, диалектизм, аффикс, аффиксация, словообразование, префикс, суффикс, заимствованные аффиксы, словообразовательная основа, словообразовательная структура, диалектные морфемы.*

SUMMARY

Word- building (affixational) Dialectisms in Artsakh and Zangezur Writer's Works
Rena Movsesyan

In the works of Artsakh and Zangezur writers many dialectal affixational words are used which are marked out by their structural variety and reflex a rich and flexible word-formation structure of both the literary Armenian language and the Karabakh dialect.

Of great interest are the affixational words formed by the synthesis of literary and dialectal morphemes.

Key words: *word stock, dialectism. affix, affixation, word building, prefix, suffix, borrowed affixes, word-formation stem, word-formation structure, dialectal morphemes.*